

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6

ք. Երևան

27.12.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 66-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

Օր ա կ ա ր գ ու մ .

1. Ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2005-2006 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

2. ԵՊՀ 2006թ. ֆինանսական տարվա հաշվետվությունը:

3. ԵՊՀ 2007թ. բյուջեի հաստատումը:

4. Ընթացիկ հարցեր

1. Ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2005-2006 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

Ջեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

ԵՊՀ ռեկտորը հաշվետվության սկզբում անդրադարձավ կրթական խնդիրներին՝ նշելով որ, 2005-2006 ուսումնական տարում համալսարանում շարունակվել են աշխատանքները կրթական երկաստիճան համակարգի կատարելագործման, ուսումնական պլանները ուսումնական ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու և այլ ուղղություններով: Արամ Սիմոնյանն անդրադարձավ ուսանողների, շրջանավարտների և պրոֆեսորադասախոսական կազմի թվաքանակների փոփոխությանը՝ նշելով երիտասարդ կադրերի խրախուսման և պատրաստման կարևորությունը: Ապա ռեկտորը ներկայացրեց համալսարանում անցկացվող ուսանողների կողմից դասխոսների գնահատման սոցիոլոգիական հարցման արդյունքները: Հարցումն անցկացվում է ըստ գործող կանոնակարգի յուրաքանչյուր քննաշրջանի ավարտից հետո այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է տվյալ դասախոսը: Թեև հարցումն իրականացնում է ուսումնական վարչությունը, սակայն մեծ է ֆակուլտետի դերը ինչպես հարցաթերթիկների ձևավորման, այնպես էլ հարցման կազմակերպման գործում: Ապա Արամ Սիմոնյանը

նշեց համալսարանի կողմից հրատարակված գիտական և ուսումնական գրականության ծավալներին՝ կարևորելով դրանց որակի բարձրացումը: Ինչպես նշեց ռեկտորը այս ուսումնական տարվանից ԵՊՀ-ում ստեղծվեց ուսումնական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման ժամանակավոր ընթացակարգ, ըստ որի համալսարանում իրականացվեց ուսանողների՝ վճարովի համակարգից անվճար համակարգ տեղափոխման և կրթաթոշակների նշանակման գործընթացը: Արդյունքում նպաստ նշանակվեց 640 ուսանողի, իսկ վճարովի համակարգ տեղափոխվեց 224 ուսանող (35%): Կրթաթոշակ նշանակվեց «գերազանց» և «լավ» առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող 489 ուսանողի (65%):

Հաջորդ խնդիրը, որին անդրադարձավ ռեկտորը, կրեդիտային համակարգին անցումն էր: 2006թ. հունիսի 1-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել է Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը, որը նախատեսում է 2007-2008 ուստարում իրականացնել անցում դեպի մագիստրոսական կրթության կազմակերպումը կրեդիտային համակարգի հենքի վրա, իսկ 2008-2009 ուստարում կրեդիտային համակարգը ներդնել նաև բակալավրիատում: Այդ նպատակով կատարվում է մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերակազմում, գիտելիքի գնահատման միասնական վարկանիշային համակարգի մշակում, ճշգրտվում է ԵՊՀ-ում գործող մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը, մշակվում են ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու կանոնակարգերը:

Ապա ռեկտորն անդրադարձավ ԵՊՀ հետբուհական կրթության և համալսարանական կրթության զարգացման վարչությունների աշխատանքներին նշելով հիմնական ձեռքբերումներն ու խնդիրները:

Ապա ռեկտորը ներկայացրեց երիտասարդ ասպիրանտներին գիտական թեմաներում ընդգրկելու հիմնական խնդիրները, որը կխթանի համալսարանական գիտության զարգացումը:

Արամ Սիմոնյանի կողմից նաև կարևորվեցին ԵՊՀ միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները:

Հաշվետվության հաջորդ հիմնական ուղղությունը գիտատեխնիկական և ուսումնա-նյութատեխնիկական բազայի զարգացումն էր, որը, ըստ ռեկտորի, կոչված է ապահովելու ուսումնագիտական ողջ գործընթացի նորմալ իրականացումը: Շարունակվել են հիմնանորոգման աշխատանքները քիմիայի, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետներում: Ստեղծվել և կահավորվել են 4 համակարգչային կաբինետներ: Ընթացիկ նորոգման աշխատանքներ են կատարվել ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարանային ճամբարում և առանձին մասնաշենքերում: Հիմնանորոգվել են կենտրոնական մասնաշենքի

աստիճանները, առանձին հարկաբաժիններում իրականացվել են նորոգման աշխատանքներ: Փոխվել է կաթսայատնից քիմիայի մասնաշենք գնացող ջերմատար խողովակաշարը: Ձեռք է բերվել շուրջ 200 ժամանակակից համակարգիչ, ընդլայնվել է համալսարանական համակարգչային ցանցը:

Ռեկտորն անդրադարձավ նաև գիտական գրադարանի իրականացրած գործունեությանը: Անցած ժամանակահատվածում գրադարանի ֆոնդերը համալրվել են ուսումնական և գիտական գրականությամբ, ինչպես նաև պարբերական հրատարակություններով: Մասնավորապես մուտքագրվել է 3586 անուն 15995 միավոր գրականություն, որից 818 անուն 7473 միավորը ուսումնական է: Համալրումը կատարվել է դրամական փոխանցումների, միջազգային, ԱՊՀ գրքափոխանակության, նվիրատվության, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի հատկացումների միջոցով: Գրադարան հաճախողների թիվը ուսումնական տարվա ընթացքում եղել է 872500:

Սոցիալական ապահովումը ռեկտորի կողմից նույնպես առանձնաձվեց որպես համալսարանի գործունեության կարևորագույն ուղղություն:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ռեկտորը կարևորեց անհատի ու քաղաքացու ձևավորումը, նրա քաղաքացիական, ռազմահայրենասիրական, իրավական և մտավոր որակների զարգացումը: Այս ոլորտում մեծ աշխատանք է տարվել ուսանողների տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ:

Ինչպես Արամ Սիմոնյանը նշեց իր հաշվետվության մեջ կարևորագույն խնդիր է համալսարանի համար նաև շրջանավարտների աշխատանքվ ապահովման խնդիրը, որը իրականացվում է «Կարիերայի կենտրոնի» միջոցով: Կառույցը նախապատրաստել է «Շրջանավարտների գրանցման թերթիկ», որի հիման վրա ստեղծվել է շրջանավարտների տվյալների բազա: Կենտրոնը համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել «Կարիերայի կենտրոն» գործակալության հետ, որը թափուր աշխատատեղերի մասին հայտնում է կենտրոնին: Այդ կերպ աշխատանքի են տեղավորվել ԵՊՀ մի շարք շրջանավարտներ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը քայլեր է ձեռնարկել միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ:

Ուսանողների մշակութային դաստիարակությունը հաջորդ խնդիրն էր, որին անդրադարձավ ԵՊՀ ռեկտորը՝ կարևորելով ԵՊՀ նորաստեղծ Մշակույթի կենտրոնի դերը, որը սակայն հաշվետու ժամանակահատվածում հասցրել է որոշակի աշխատանք տանել այդ ոլորտում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ նորաստեղծ կարևորագույն ստորաբաժանումներից է նաև «Հասարակայնության հետ կապերի և լրատվության» վարչությունը, որը հասցրել է արմատապես վերափոխել ԵՊՀ կայքը և աշխատանքներ են կատարվում ԵՊՀ պաշտոնական պարբերականի

վերականգնման ուղղությամբ: Ինչպես նշեց Արամ Սիմոնյանը ԵՊՀ անբաժան մասն է նաև Իջևանի մասնաճյուղը, որտեղ ևս գրանցվել են որոշակի ձեռքբերումներ:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում: Զեկուցողին հարցեր չեղան, որից հետո հայտարարվեց ելույթների հերթագրում:

Գրանցվեցին Երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարատ Գրիգորյանը, Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Հրաչիկ Միրզոյանը և ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Մարատ Գրիգորյանն անդրադարձավ ԵՊՀ գիտահետազոտական և ուսումնական լաբորատորիաների վատ վիճակին, և կարևորեց դրանց համալրումը նոր սարքավորումներով, այլապես համալսարանը արդեն դադարում է լինել մրցունակ իր գիտաուսումնական արտադրանքով միջազգային շուկայում:

Արծրուն Ավագյանը ներկայացրեց մի քանի հուզող հարցեր, որոնցից առաջինը վերաբերվում էր ԵՊՀ դասախոսական կազմի ծերացմանը և երիտասարդ կադրերի պատրաստմանը: Ինչպես նաև գիտնականների կողմից հրատարակվող գրքերի տպագրական ծախսերի հայթայթմանը և միասնական քննության իրականացման գործընթացում հանդիպող խոչընդոտներին:

Հրաչիկ Միրզոյանը նշեց, որ համալսարանի համար ցավոտ է պրոֆեսորադասախոսական կազմի համալրման հարցը՝ դրական գնահատելով այն, որ պրոֆեսորների թիվը ավելացել է, սակայն պակասել է պրոֆեսոր-դասախոս հարաբերությունը: Սրա հաղթահարման ուղի Հրաչիկ Միրզոյանը տեսնում է գիտական աշխատանքով զբաղվելու, դոկտորական ատենախոսության պաշտպանության խրախուսման և աջակցության միջոցառումների ձեռնարկումը: Նա դիմեց խորհրդին նմանատիպ միջոցառումների մշակման ու իրագործման համար:

Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում նշեց այն, որ կրեդիտային համակարգի ներդրումը արդեն իսկ ենթադրում է ուսանողների թվաքանակի նվազեցում համապատասխան պայմանների ապահովման համար: Այս պարագայում համալսարանը կարիք կունենա կողմնակի միջոցների ներգրավման: Այստեղ նա կարևորեց պետական բյուջեից կրթության և գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը, որը համալսարանի համար կարևորագույն խնդիր է:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց ընդունել ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2005-2006 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և այն գնահատել բավարար:

Կողմ`66, Դեմ` 0, Ձեռնպահ`0:

2. ԵՊՀ 2006թ. ֆինանսական տարվա հաշվետվությունը:

Ջեկ. ԵՊՀ պլանավորման և ֆինանսական կառավարման վարչության պետ Վ. Պետրոսյան

Սկզբում զեկուցողը ներկայացրեց ԵՊՀ 2006թ.-ի եկամուտների ընդհանուր գումարը, որը կազմում էր 4.158.584.000 դրամ և ապա մանրամասնեցրեց, թե ինչ աղբյուրներից և որքան են կազմել եկամուտները: Ապա զեկուցողի կողմից ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսերը, որը կազմում է 3.913.167.800 դրամ, որը եկամուտների նկատմամբ կազմում է 94,1%: Վ. Պետրոսյանը նշեց, որ ծախսերի 72,2%-ը աշխատավարձի և սոց. ապահովման ծախսերն են: Ջեկուցողը հատուկ առանձնացրեց, որ հիմնանորոգման հիմնական ընդհանուր ծախսը կազմել է 480 մլն. դրամ: Ինչպես նաև ձեռք է բերվել ավելի քան 170 համակարգիչ՝ շուրջ 47 մլն. դրամի:

Հարցերի համար հերթագրվեցին Լ.Շեկյանը, Յ. Վարդանյանը, Ա. Ավետիսյանը, Ռ. Պետրոսյանը, Հ. Սարգսյանը, Գ. Անանյանը, Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը:

Լ. Շեկյանը խնդրեց մանրամասնել այլ եկամուտների տողով նշված գումարը ինչ աղբյուրներից է ստացվել: Վ. Պետրոսյանը նշեց, որ դրանք հիմնականում դրամաշնորհներն են, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները, ընդունելության քննությունների վճարներ և այլ վճարովի ծառայություններ:

Յ. Վարդանյանը խնդրեց ներկայացնել, թե դասախոսներին տրամադրվող աշխատավարձի որ մասն է վճարվում պետական բյուջեից և արդյոք դրա ավելացում սպասվում է: Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ պետ. բյուջեից բյուջեի գծով յուրաքանչյուր աշխատողին տրամադրվում է 15.000 դրամ, որը այս տարի ավելացվելու է 5.000 դրամով:

Ա. Ավետիսյանը հարցրեց, թե քանի աշխատող ունի Երևանի պետական համալսարանը, որին Վ. Պետրոսյանը պատասխանեց 3522-ից ավելի, որից 1910-ը պետական բյուջեից նախատեսված:

Ռ. Պետրոսյանը հարցրեց, որ ծախսերի ցանկում նշված է 155.112.900 դրամ ամորտիզացիոն ծախս, մի՞թե դա համալսարանի կողմից ծախս է համարվում: Վ. Պետրոսյանը նշեց, որ ամորտիզացիոն հատկացումները կատարվում են արտաբյուջետային գումարներից և հատկացվում են անշարժ ու շարժական գույքի պահպանման համար:

Հ. Սարգսյանը հարցրեց, արդյոք պետական բյուջեից մեկ ուսանողին տրամադրվող գումարները համապատասխանում են իրականում մեկ ուսանողի համար կատարվող ծախսերին: Վ. Պետրոսյանը նշեց, որ համալսարանի կողմից

փոփոխվել են պետության կողմից սահմանված նորմատիվները և ծախսվում է կրկնակի ավել, որը, փաստորեն, կատարվում է վճարովի համակարգի հաշվին:

Գ. Անանյանը հարցրեց, թե գործուղումային ծախսերից որ մասն է ծախսել հումանիտար թևը և որը բնագիտականը: Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ հիմքում դրված է ամբիոնների քանակը՝ յուրաքանչյուր ամբիոնին 150.000 դրամ, սակայն ֆակուլտետներ կան, որ չեն օգտագործում այդ գումարը:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հարցրեց, որ զեկուցման ընթացքում նշվեց 330 մլն դրամ ծախսված կապիտալ շինարարության վրա, որը սակայն նշված չէ ծախսերի մեջ: Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ հարկային տեսչությունը այն ծախս չի ընդունում, սակայն այդ գումարը պետք է ներկայացվեր որպես ելք, որը չի կատարվարվել:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց ընդունել Երևանի պետական համալսարանի 2006թ.-ի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը և այն գնահատել բավարար:

Կողմ՝ 66, Ղեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

3. ԵՊՀ 2007թ. բյուջեի հաստատումը:

Ջեկ. ԵՊՀ պլանավորման և ֆինանսական կառավարման վարչության պետ Վ. Պետրոսյան

Վ. Պետրոսյանը նշեց, որ ԵՊՀ 2007թ.-ի բյուջեն նախատեսվում է ավելացնել 352.780.000 դրամով, ընդ որում աշխատավարձի ֆոնդը ավելացվում է 568.2 մլն դրամով, որը առանձնացվում է ի հաշիվ կոմունալ ծախսերի խնայման: Վ. Պետրոսյանը անդրադարձավ նաև ուսման վճարների տարբերակված համակարգի, որը ևս առաջացրել է 288.4 մլն դրամի աճ: Եվ արդյունքում ԵՊՀ 2007թ.-ի բյուջեում առկա է 98.3 մլն դրամի դրական տարբերություն: Վ. Պետրոսյանը ԵՊՀ խորհրդի հաստատմանը ներկայացրեց նաև խոշոր գնումների ցանկը՝ 168 մլն դրամի չափով և դրանց իրականացման կարգը համապատասխան ստորաբաժանման կողմից: Վ. Պետրոսյանը խոշոր գնումների թվում առանձնացրեց Շուշի քաղաքում ուսումնարտադրական բազայի ձեռքբերման և վերանորոգման ծախսերը՝ որը պետք է ծառայի որպես գիտաժողովների տուն:

Ելույթների և հարցերի համար հերթագրվեցին՝ Ա. Ավետիսյանը, Վ. Սարգսյանը, Գ. Ղազինյանը, Ս. Ղոնաղջյանը, Գ. Անանյանը, Մ. Հակոբյանը, Ե. Միրզոյանը, Կ. Գրիգորյանը, Հ. Հակոբյանը, Վ. Սարգսյանը, Ս. Սարգսյանը:

Ա. Ավետիսյանը իր հարցը ուղղեց ռեկտոր Ա. Սիմոնյանին և առաջարկեց բյուջեում առանձնացնել 100 մլն դրամ համաֆինանսավորում պահանջող միջազգային ծրագրերի համար:

Վ. Սարգսյանը առաջարկեց բյուջեում ընդգրկել նաև բարեգործական և հովանավորչական գործունեությունից տրամադրվող գումարները, մշակել և խորհրդին ներկայացնել ամորտիզացիոն գումարների կառավարման համակարգը, ինչպես նաև ներկայացնել բյուջեի դրական մնացորդի կառավարման հաշվետվությունը:

Հ. Միրզոյանը հարցրեց, թե ինչու է գումար նախատեսվում Ծաղկաձորի տանիքի վերանորոգման համար, որը նոր է կառուցվել: Հարցին պատասխանեց ռեկտոր Ա. Սիմոնյանը՝ նշելով որ շենքի կառուցման ընթացքում տանիքը սխալ է կառուցվել և շենքը հայտնվել է վթարային վիճակում և տանիքի վերանորոգումը շենքի փրկության համար խիստ անհրաժեշտ է:

Գ. Ղազինյանը հարցրեց, որ ամեն տարի ֆակուլտետներին նախատեսվում են լիմիտային գումարներ, այս տարի այդպիսիք կան արդյոք և ինչ փոփոխություններ են նախատեսվում: Վ. Պետրոսյանը հայտնեց, որ նույն սկզբունքով կախված ուսանողների և ամբիոնների թվից այս տարի ևս ֆակուլտետներին կառանձնացվեն լիմիտային գումարներ:

Ս. Ղոնաղջյանը նշեց, որ ներկայացված բյուջեն չի համապատասխանում հավասարակշռված բյուջեի օրինակելի նախագծի, քանի որ եկամուտները թվարկված չեն, ծախսային հոդվածները առանձնացված չեն: Ինչպես նաև Ս. Ղոնաղջյանը առաջարկեց 10-15% գումարի չափով հոդվածային տեղաշարժեր իրականացնելու իրավասություն տալ ԵՊՀ ռեկտորին, նաև առանձնացնել և խորհրդի հաստատմանը ներկայացնել պահուստային ֆոնդի ծախսման հիմնական ուղղությունները:

Գ. Անանյանն առաջարկեց առավելագույն թափանցիկության նպատակով բյուջեն ներկայացնել ԵՊՀ ինտերնետային կայքում:

Մ. Հակոբյանը առաջարկեց բյուջեն անվանել, որը կկոչվի ասենք զարգացման, կայունության կամ ճգնաժամի բյուջե:

Ե. Միրզոյանը հարցրեց ԵՊՀ գրադարանի համալրում իրականացնելու համար ԵՊՀ բյուջեի որ հոդվածում է պլանավորված այդ ծախսը: Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ այն ընդգրկված է ամորտիզացիոն հատկացումների մեջ:

Կ. Գրիգորյանը հարցրեց, որ ԵՊՀ-ում ստեղծվել են նոր ստորաբաժանումներ և բյուջեի ո՞ր մասով է նախատեսվում այդ ստորաբաժանումների ֆինանսավորումը:

Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ այն իրականացվում է ընդհանուր կարգով ամորտիզացիոն հատկացումների տողից:

Հ. Հակոբյանը նշեց, որ 2006թ.-ի կատարողականում նշված են ծախսեր, որոնք չկան 2007-ի բյուջեում, արդյոք այդ ծախսերը նախատեսվում են, թե՞ ոչ:

Վ. Սարգսյանը առաջարկեց նաև, որ Երևանի պետական համալսարանի բյուջեն չլինի մեկ էջի սահմաններում, այլ ներկայացվի առավել մանրամասը:

Խորհրդի նախագահը սահմանափակեց ելույթները և հարցերը այն ցուցումով, որ 2007թ.-ի ընթացքում ցանկացած ծախս պետք է ներառվի հաշվետվության մեջ և առաջարկեց հանձնարարել Դ. Հայրապետյանին, Վ. Սարգսյանին և Ս. Ղոնադյանին մշակել բյուջեի առավել մանրամասեցված տարբերակը:

ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2007թ.-ի բյուջեն՝ համաձայն ԵՊՀ խորհուրդ ներկայացված «Երևանի պետական համալսարանի 2007թ.-ի բյուջեի նախագիծ»-ի՝ նրանում ընդգրկելով նիստի ժամանակ արված համապատասխան առաջարկությունները՝ հետագա լրամշակումներով:

2. Հանձնարարել ԵՊՀ ռեկտորին 2007թ.-ի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան և հաջորդ նիստին անձամբ ներկայացնել 2007թ.-ի ծախսերի մասին հաշվետվությունը:

Կողմ՝ 66, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

27.12.2006թ.

ք. Երևան